ՍԴ3/0088/01/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

20 մարտի 2023 թվական ք.Երևան

Ուսումնասիրելով թիվ ՍԴ3/0088/01/22 քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին դիմելու մասին Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2023 թվականի մարտի 3-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2022 թվականի հուլիսի 19-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է թիվ ՍԴ3/0088/01/22 քրեական վարույթն ըստ մեղադրանքի՝ Էրիկ Արարատի Ավետյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 361-րդ հոդվածի 7-րդ մասով, և 2022 թվականի հուլիսի 26-ին որոշում է կայացվել քրեական գործի վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի հոկտեմբերի 17-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ3/0088/01/22

քրեական վարույթն ըստ ընդդատության Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին:

2. Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, 2023 թվականի մարտի 3-ի որոշմամբ, գործի ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար դիմել է Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին:

3. Թիվ ՍԴ3/0088/01/22 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2023 թվականի մարտի 13-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

4. 2022 թվականի մայիսի 24-ին Էրիկ Ավետյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 7-րդ մասով՝ այն բանի համար, որ *«նա հանդիսանալով ՊԲ 49971 զորամասի 3-րդ հրաձգային գումարտակի 7-րդ հրաձգային վաշտի ապահովման ջոկի վարորդ, պարտադիր ժամկետային զինծառայող, կոչումով շարքային, նույն զորամասի հրամանատարի թիվ 012 հրամանով 2020 թվականի դեկտեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 21-ը գտնվելով արձակուրդում և պարտավոր լինելով դեկտեմբերի 21-ին ժամը 18:00-ին ներկայանալ ծառայության վայր՝ ՊԲ 49971 զորամաս, 2020 թվականի սեպտեմբերի 27-ից ՀՀ-ում և ԱՀ-ում հայտարարված ռազմական դրության ժամանակ, առանց հարգելի պատճառների չի ներկայացել, իսկ 2021 թվականի հունվարի 18-ին՝ ժամը 15:00-ին ինքնակամ ներկայացել է ՀՀ ՊՆ ՌՈ՝ դրանով իսկ ծառայությունից բացակայելով երեք օրից ավելի, բայց մեկ ամսից ոչ ավելի տևողությամբ»*[1]:

5. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի հոկտեմբերի 17-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) Նշված հանցագործությունը համարվում է տևող հանցագործություն և դրա կատարման տևականությունը պայմանավորվում է զինծառայողի կողմից իր վրա դրված պարտականության՝ զորամասում կամ ծառայության վայրում գտնվելու կամ*

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 208-209:

սահմանված ժամկետում զորամաս կամ ծառայության վայր վերադառնալու պարտավորության չկատարմամբ:

Սույն քրեական գործի մեղադրական եզրակացությունից դիտվում է, որ Էրիկ Արարատի Ավետյանը ծառայության նշանակված լինելով ՊԲ 49971 զորամասում և գտնվելով արձակուրդում ու պարտավոր լինելով 2020 թվականի դեկտեմբերի 21-ին ժամը 18:00-ին ներկայանալ ՊԲ 49971 զորամաս, 2021 թվականի հունվարի 18-ին ժամը 15:00-ին ինքնակամ ներկայացել է ՀՀ ՊՆ ՌՈ: Այսինքն՝ Է.Ավետյանի ենթադրյալ հանցանքի կատարումը ըստ առաջադրված մեղադրանքի սկսվել է 2020 թվականի դեկտեմբերի 21-ին ժամը 18:00-ին և ավարտվել է 2021 թվականի հունվարի 18-ին ժամը 15:00-ին ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանություն /ՀՀ քաղաք Վանաձոր, տե՛ս գ.թ. 3/ ինքնակամ ներկայանալով, որպիսի հանգամանքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի իրավակարգավորումների շրջանակում նշանակում է, որ սույն գործն ընդդատյա է ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին: (…)»[2]*:*

6. Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2023 թվականի մարտի 3-ի որոշման համաձայն՝ *«(…) Դատարանը գտնում է, որ Է.Ավետյանին վերագրվող հանցագործության օբյեկտ է հանդիսանում զինվորական ծառայության անցնելու կարգը, որը սահմանվում է օրենքներով, զինվորական կանոնագրքերով և կանոնադրություններով: Զորամասի մարտական պատրաստության ապահովման համար կարևոր է, որ զինծառայողը միշտ գտնվի ծառայության վայրում, կատարի պետի հրամանը, հանդիսանա ռազմահրավական հարաբերությունների սուբյեկտ:*

ՊԲ 49971 զորամասը գտնվում է Սյունիքի մարզի դատարանի դատական տարածքում՝ Արցախի Հանրապետությունում, որով պայմանավորված նշված տարածքի քննչական մարմինների կողմից իրականացվել է նախաքննություն և մեղադրական եզրակացությունը կազմվել է 27.06.2022 թվականին նույն մարմինների կողմից Մարտակերտ քաղաքում:

Է.Ավետյանին վերագրվող հանցագործության դեպքի վայր է հանդիսանում Մարտակերտում տեղակայված ՊԲ 49971 զորամասը և ենթադրյալ

[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 27-28:

հանցագործության կատարումն ըստ գործի նյութերի սկսվել է նշված զորամասից բացակայելու օրինական հիմքերն ավարտելուց հետո նշված զորամաս չվերադառնալու օրվանից՝ 2020 թվականի դեկտեմբերի 21-ի ժամը 18:00-ից և ավարտվել է 2021 թվականի հունվարի 18-ին, ժամը 15:00-ին, երբ նա ինքնակամ ներկայացել է ՀՀ ՊՆ ՌՀՈ, գտնվել է ռազմական կառույցների տրամադրության տակ և այդ պահից սկսած հնարավորություն է առաջացել համապատասխան ծառայությունների միջոցով ներկայացնել ծառայության վայր՝ ՊԲ 49971 զորամաս:

Նույնանման իրավիճակ կարող էր լինել նաև այն պարագայում, եթե Է.Ավետյանը հայտնաբերվեր կամ ինքնակամ ներկայանար որևէ այլ պետության իրավապահ մարմիններ:

Այս պարագայում ևս գործն ընդդատյա կլիներ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, այն հիմնավորմամբ, որ վերագրվող հանցագործության դեպքի վայրը՝ թիվ 49971 զորամասը, գտնվում է նշած դատարանի դատական տարածքում: Հանցագործության սկիզբ պետք է հաշվել ծառայությունից բացակայելու օրինական հիմքերի ավարտվելու օրվանից՝ 2020 թվականի դեկտեմբերի 21-ի ժամը 18:00-ից մինչև ռազմական իշխանությունների տրամադրության տակ հայտնվելը՝ 2021 թվականի հունվարի 18-ի ժամը 15:00-ն՝ անկախ նրա գտնվելու աշխարհագրական վայրից: (…)»[3]*:*

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

7. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՍԴ3/0088/01/22 քրեական վարույթն ընդդատյա է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

---

[3] Տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 53-55:

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

10. Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(...) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (19-րդ հոդված), Քաղաքացիական և*

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]*:*

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից: (…)»:*

12.1. ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Երեք օրից ավելի, բայց մեկ ամսից ոչ ավելի տևողությամբ, ինչպես նաև երեք ամսվա ընթացքում երեք և ավելի անգամ մեկ ժամից մինչև երեք օր տևողությամբ զինծառայողի կողմից զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը կամ առանց հարգելի պատճառների ժամանակին ծառայության չներկայանալը (…):*

7. Սույն հոդվածով նախատեսված արարքները, որոնք կատարվել են ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում (…)»:

13. Տարածքային ընդդատությունը սահմանող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումներից հետևում է, որ որպես քրեական գործերի

---

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

դատական տարածքը որոշելու հիմնական կողմնորոշիչ պայման հանդես է գալիս **հանցանքի կատարման վայրը**:

ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածով ամրագրված հանցակազմի օբյեկտիվ կողմն արտահայտվում է զինծառայողի կողմից զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելով կամ առանց հարգելի պատճառների ժամանակին ծառայության չներկայանալով: Վերոնշյալ հանցագործությունը հանդիսանում է տևող և ավարտված է համարվում արարքի դադարման պահից, որը կարող է պայմանավորված լինել ինչպես հանցավորի գործողություններով (օրինակ՝ մեղայականով ներկայանալով), այնպես էլ նրանից անկախ հանգամանքներով (օրինակ՝ իրավապահ մարմինների միջամտությամբ և այլն):

14. Սույն գործի նյութերի և Է.Ավետյանին առաջադրված մեղադրանքի ուսումնասիրությունից հետևում է, որ՝

- Է.Ավետյանը, հանդիսանալով պարտադիր ժամկետային զինծառայող, 2020 թվականի դեկտեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 21-ը գտնվելով արձակուրդում և պարտավոր լինելով դեկտեմբերի 21-ին ներկայանալ ծառայության վայր՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրության ժամանակ, չի ներկայացել ծառայության, իսկ 2021 թվականի հունվարի 18-ին ինքնակամ ներկայացել է ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանություն՝ դրանով իսկ ծառայությունից բացակայելով երեք օրից ավելի, բայց մեկ ամսից ոչ ավելի տևողությամբ[7]:

- Ինքնակամ ներկայանալու մասին 2021 թվականի հունվարի 18-ի արձանագրության համաձայն՝ Է.Ավետիսյանն ինքնակամ ներկայացել է Վանաձոր քաղաքում գտնվող ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Վանաձորի բաժին[8]:

- Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի հոկտեմբերի 17-ին որոշում է կայացրել քրեական գործն ըստ ընդդատության Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին՝ հիմքում դնելով այն, որ քրեական օրենքով

---

[7] Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:
[8] Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 3:

չթույլատրված արարքն ավարտվել է 2021 թվականի հունվարի 18-ին Է.Ավետյանի՝ ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանություն ինքնակամ ներկայանալով[9]:

- Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը գտել է, որ թիվ ՍԴ3/0088/01/22 քրեական վարույթն ընդդատյա չէ իրեն, պատճառաբանելով, որ Է.Ավետյանին վերագրվող հանցագործության դեպքի վայր է հանդիսանում Մարտակերտում տեղակայված ՊԲ 49971 զորամասը, և ենթադրյալ հանցագործության կատարումը, ըստ գործի նյութերի, սկսվել է նշված զորամասից բացակայելու օրինական հիմքերն ավարտելուց հետո զորամաս չվերադառնալու օրվանից՝ 2020 թվականի դեկտեմբերի 21-ի ժամը 18:00-ից, և ավարտվել է 2021 թվականի հունվարի 18-ին ժամը 15:00-ին, երբ վերջինս ինքնակամ ներկայացել է ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանություն[10]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-13-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ Է.Ավետյանին մեղսագրված ենթադրյալ հանցավոր արարքը՝ որպես տևող հանցագործություն, ավարտվել է 2021 թվականի հունվարի 18-ին՝ այն ժամանակ, երբ մեղադրյալը ինքնակամ ներկայացել է ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Վանաձորի բաժին: Հետևաբար, Է.Ավետյանին մեղսագրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված տևող ենթադրյալ հանցագործությունն ավարտվել է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոշարադրյալը, գտնում եմ, որ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՍԴ3/0088/01/22 քրեական վարույթն ընդդատյա է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր չէ:

16. Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 6-րդ մասով՝

---

[9] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[10] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ ՍԴ3/0088/01/22 քրեական վարույթն ըստ մեղադրանքի՝ Էրիկ Արարատի Ավետյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 7-րդ մասով, ընդդատյա է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ